ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՊՕՂՈՍ Բ. ՊԱՊԸ 1999Թ. ՅՈՒԼԻՍԻ Զ-ԻՑ 4-Ը ՆՈՐԻՆ ՍԲ. ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՐԱՒԷՐՈՎ Կ'ԱՅՑԵԼԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Վատիկանը եւ Ս. Էջմիածինը հայեցողութիւն ունեն յայտարարելու Նորին Սրբութիւն Յովհաննէս-Պօղոս Բ. Պապի Հայաստանի Հանրապետութիւն կատարելիք այցելութեան մասին:

Պապը կը ժամանի Հայաստան Ուրբաթ, Յուլիսի Զ-ին: Հայաստանում նա կը հիւրընկալուի Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Հայաստանեայց Առաքելական եկեղեցու գլխաւոր սրբավայրում: Նոյնեայ այցի ընթացքում Պապը կ'այցելի Երեւան եւ աղէտեալ գօտի՝ Գիւմրի եւ Աշոցք: Հռոմի Պապը կը մեկնի Հայաստանից Կիրակի՝ Յուլիսի 4ի երեկոյեան:

Պապը Հայաստանում է ժամանում Նորին Սուրբ Օծութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Մայրագոյն Պատրիարք Գարեգին Առաջինի՝ աշխարհասփիւռ հայութեան հոգեւոր առաջնորդի հրաւէրով: Ամենայն Հայոց Գարեգին Ա. Կաթողիկոսը, որ նշանակալից գործունէութիւն է ծաւալել միջազգային էկումենիկ շրջանակներում, նախկինում՝ 1996թ. Մարտին, տարբեր առիթներով նոյնպէս այցելել է Պապին՝ Վատիկան:

Հայաստանեայց Առաքելական եկեղեցին մէկն է Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներից: Այս առումով Հայաստանը երկրորդ ոչ կաթոլիկ ուղղափառ երկիրն է, ուր այցելում է Հռոմի Պապը: Առաջին այդպիսի այցը Հռոմի Պապը կատարեց սոյն թուականի Մայիսին՝ Ռումանիա:

Չնայած Հռոմի Կաթոլիկ եւ Հայոց եկեղեցիների միջեւ 1500-ամեայ յարաբերութիւններին, Պապի այցը, որպէս Հռոմի քահանայապետի առաջին այցելութիւն դէպի Հայաստան, պատմական է: Այցը ունի բացառիկ առիթ եւ նախորդում է երկու դարակազմիկ իրադարձութիւնների՝ Քրիստոսի ծննդեան 2000-ամեակին եւ Հայաստանի՝ դէպի քրիստոնէութեան դարձի 1700-ամեակին:

Քրիստոսի ծննդից յետոյ 301 թուականին Հայաստանը դարձաւ աշխարհի առաջին Քրիստոնէայ ազգը: Այս իրադարձութիւնը ամբողջ աշխարհում կը նշուի 2001 յոբելինական թուականին: Յովհաննէս-Պօղոս Բ. Պապը, որ նախկինում նշել է Հայաստանի եզակի դերը քրիստոնէութեան պատմութեան մէջ, իր այցելութեան ընթացքում կը մեծարի այդ յոբելեանը:

Որպէս ուխտագնաց Հռոմի Պապը կ'այցելի նաեւ Հայոց եղեռնի զոհերի յուշահամալիր (ի ոգեկոչումն 1.5 միլիոն հայերի, որոնք 1915 թուականին նահատակուեցին Թուրքիայում՝ հայերի ցեղասպանութեան ընթացքում):

Այցելութեան ընթացքում Պապը կը հանդիպի Հայաստանի Հանրապետութեան նախագահ Ռոբերտ Քոչարեանի հետ: Գարեգին Ա. Կաթողիկոսի հետ Սրբազան Պապը կը նախագահի աղօթքի արարողութեանը Սուրբ Էջմիածնում, կ'այցելի Աշոցքի հիւանդանոց, որը կառուցուել է 1988թ. երկրաշարժից յետոյ, Վատիկանի նուիրատուութիւններով:

ՄԱՄԼՈՅ ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

digitised by A.R.A.R.@